

«Դարդան» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը տրամադրված վարկի մարման ժամկետները հետաձգելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« »

2017 թվականի N

- Ա

«ԴԱՐԴԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 9-ի N 168 որոշման՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունները լրացուցիչ գրավով («Ավտոճանապարհային մեքենաներ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող տրանսպորտային միջոցներ և արտադրամիջոցներ, որոնց շուկայական արժեքն ըստ «Էքսպերտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2017 թվականի մայիսի 5-ին տրամադրված N 70414-1 գնահատման ակտի կազմում է 242,655,000 դրամ) ապահովելու դեպքում՝ թույլատրել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին հետաձգել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2010 թվականի ապրիլի 7-ին կնքված N 01 պահանջի իրավունքի գիշման մասին պայմանագրի հիման վրա

ընկերության կողմից ստանձնած վարկային պարտավորության մնացորդ՝ 930.016,39 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով ժամկետանց պարտքի հիմնական գումարի, դրա նկատմամբ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը հաշվարկված տարեկան 2 տոկոս դրույքաչափով տոկոսագումարի, ինչպես նաև հաշվարկված տույժի գումարների մարման ժամկետները:

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝

1) «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել պայմանագրի փոփոխման մասին համաձայնագիր՝ սահմանելով, որ ընկերության նկատմամբ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրը հաշվարկված տոկոսագումարները և տույժի գումարները ենթակա են կապիտալացման՝ որպես վարկի հիմնական գումար.

2) «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքվող պայմանագրում սահմանել, որ ընկերությունը պարտքի մարման նպատակով պարտավոր է 2017 թվականից սկսած մինչև 2021 թվականը ներառյալ, համամասնորեն մարման պայմանով, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել կապիտալացված վարկի գումարը և պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագրով սահմանված տոկոսագումարը:

Ընկերությունը պարտավորվում է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 1-ը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համապատասխան հաշվեհամարին վճարել թիվ ԱՐԴ1/0113/02/14, ԱՐԴ1/2008/02/14 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից վճարված պետական տուրքի և ընկերության կողմից սույն գործի շրջանակներում Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան ներկայացրած վերաքննիչ բողոքի համար պակաս վճարված պետական տուրքի գումարները.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում՝ սահմանված կարգով կատարել փոփոխություններ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և «Դարդան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2010 թվականի ապրիլի 7-ին կնքված N 01 պահանջի իրավունքի զիջման մասին պայմանագրի ժամանակացույցում՝ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված վարկի մարման պայմաններին համապատասխան: